ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 դեկտեմբեր 2017, № 22. 7

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Շիրակի պետական համալսարանի կանոնադրության 48-րդ կետի 4-րդ ենթակետով, «ՇՊՀ» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգի 2-րդ կետի 2.2.4 ենթակետով՝՝ ՇՊՀ գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Նորարարական և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կանոնադրությունը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

Հաստատված է՝
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2017թ. դեկտեմբերի 28-ի նիստում
Խորհրդի նախագահ՝ _____ Ս.Գ. Մինասյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՆ «ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Նորարարական և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը (այսուհետև՝ Բաժին) Շիրակի պետական համալսարանի (այսուհետև՝ ՇՊՀ) կառուցվածքային ստորաբաժանումն է, գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության ՇՊՀ կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.2. Բաժինը կարող է փոփոխել կարգավիճակը կամ դադարեցնել գործունեությունը ՇՊՀ ռեկտորի ներկայացմամբ՝ ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

1.3. Սույն կանոնադրությունը հաստատվում, լրացվում կամ փոփոխվում է ՇՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

2. Բաժնի խնդիրներն ու գործառույթները

2. Բաժնի խնդիրներն են.

2.1 ապահովել և կառավարել ներհամալսարանական տեղեկատվական համակարգերի աշխատանքը,

2.2. սպասարկել և արդիականացնել համալսարանի համակարգչային տեխնիկան և սարքավորումները,

2.3 օժանդակել համալսարանի ներքին փաստաթղթաշրջանառության աշխատանքներին

2.4. ուսումնական ենթակառուցվածքներն ապահովել անհրաժեշտ համակարգչային տեխնիկայով,

2.5. ապահովել ներհամալսարանական տեղեկատվական համակարգերի շահագործումը, մշակել և ներդնել նոր համակարգեր,

2.6. աջակցել կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը,

2.7. ապահովել համալսարանի ենթակառուցվածքների և լսարանների համակարգիչների ինֆորմացիայի անվտանգությունը՝ ներդնելով հակավիրուսային ծրագրեր և անվտանգության այլ միջոցներ

3. Բաժնի գործառույթներն են.

3.1. անվտանգ և անխափան շահագործել համալսարանի ներքին ցանցը, ներկայացնել առաջարկություններ ցանցի զարգացման ուղղությամբ,

3.2. վերանորոգել համակարգչային տեխնիկան, ներկայացնել առաջարկություններ տեխնիկայի ձեռքբերման և համապատասխան տեխնիկական առաջադրանքների վերաբերյալ,

3.3. ապահովել ՇՊՀ ստորաբաժանումները համացանցով, կատարել կառավարում և մշտադիտարկում,

3.4. տեղադրել պահանջվող ծրագրային ապահովումը (օպերացիոն համակարգեր, կիրառական ծրագրեր) հնարավորինս սեղմ ժամկետներում,

3.5. ղեկավարել ՇՊՀ ինտերնետային ռեսուրսները (կայք, Վեբ-պորտալ, էլ. փոստերի համակարգ և այլն) և լուծել ընթացիկ սպասարկման աշխատանքների հետ կապված տեխնիկական խնդիրները,

3.6. կառավարել և սպասարկել համալսարանական էլեկտրոնային փոստի համակարգը,

3.7. ապահովել ներհամալսարանական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի աշխատանքը, իրականացնել համակարգչային տեխնիկայի գույքագրում,

3.8. սպասարկել կրթական գործընթացում կիրառվող հեռավար ուսուցման համակարգերը և համապատասխան լսարանները,

3.9. տեղեկատվական համակարգերի շահագործման նպատակով կազմակերպել ՇՊՀ աշխատակիցների ուսուցումն ու վերապատրաստումը (էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ, ներհամալսարանային ծրագրային համակարգեր և այլն):

4. Կառուցվածքը և կառավարումը

4.1. Բաժնի աշխատանքները համակարգում է աշխատակազմի ղեկավարը, նրա բացակայության պարագայում ռեկտորի հանձնարարականով՝ պրոռեկտորներից մեկը:

4.2. Բաժնի հաստիքացուցակը հաստատում և դրա մեջ փոփոխություններ է կատարում հոգաբարձուների խորհրդի կողմից:

4.3. Բաժինը գլխավորում է վարիչը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ռեկտորը:

***4.4.** Բաժնի վարիչը իրականացնում է հետևյալ գործառույթները՝*

4.4.1. Բաժնի անմիջական ղեկավարում և վերահսկում,

4.4.2. ՇՊՀ–ի գիտական խորհրդում և ռեկտորատում ուսանողների և աշխատակիցների՝ տեղեկատվական համակարգերին, համակարգչային ցանցին ու սարքավորումներին վերաբերող հարցերի նախապատրաստում և ներկայացում,

4.4.3. ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների կողմից համակարգչային սարքավորումների ու տեղեկատվական համակարգերին վերաբերող աշխատանքների կազմակերպում և համակարգում, նշված հարցերին վերաբերող ՇՊՀ՝ իրեն ուղղված հրամանների և նորմատիվ այլ փաստաթղթերի վերահսկում և կատարում:

4.5. Բաժնի վարիչը պատասխանատվություն է կրում Բաժնի աշխատանքների որակի և նրա առջև դրված խնդիրների ու գործառույթների կատարման համար: